



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2017 թվականի թիվ 160-Ա

ԱՐՄԵՆ ՅՈՒՐԱՅԻ ԽՈՋԱՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՅ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2017թ. օգոստոսի 15-ի թիվ 6 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Ա.Խոջայանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Արմեն Յուրայի Խոջայանին 2017 թվականի օգոստոսի 25-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

2017թ. օգոստոսի 25
ք. Իջևան